



Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2022թ. մարտի 24-ի թիվ 3 նիստում
Ռեկտորի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ռ. Հակոբյան
24.03.2022թ.

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ՀԵՌԱՎԱՐ (ԱՌՑԱՆՑ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Կ Ա Ր Գ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ կամ Համալսարան) հեռավար (առցանց) կրթության (այսուհետ՝ հեռավար կրթություն, նաև առկա ուսուցման ֆակուլտետներում՝ առկա-առցանց և հեռակա ուսուցման ֆակուլտետում՝ հեռակա-հեռավար) կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանվում հեռավար կրթության իրականացման հիմքերն ու ընթացակարգը:
2. Հեռավար կրթությունը Համալսարանի կողմից մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ձև է, որի շրջանակներում ուսուցման, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները, ուսանողների և դասախոսների, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև հաղորդակցությունն իրականացվում են հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:
3. Համալսարանը կարող է իրականացնել հեռավար ուսումնական գործընթաց՝ ՀՀ կառավարության հայտարարած հատուկ ռեժիմների՝ արտակարգ և ռազմական դրության պայմաններում, անհաղթահարելի ուժի՝ ֆորս-մաժորային իրավիճակներում (տարերային աղետներ, եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում և այլ), ինչպես նաև սույն կարգի 5-րդ կետում նախատեսված այլ դեպքերում՝ ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ կամ ռեկտորի հրամանով սահմանված հիմքերով և կարգով՝ որոշակի ժամկետով:
4. Հեռավար կրթություն իրականացնելիս՝ թույլատրվում է զուգակցել տեղեկատվական և հեռահաղորդակցության տարբեր տեխնոլոգիաներ ու ծրագրեր, օգտագործել Համալսարանի էլեկտրոնային ուսուցման՝ «Learn.gsu.am»

համակարգը, ԳՊՀ էլեկտրոնային գրադարանը՝ «library.gsu.am», էլեկտրոնային ռեկտորատը, էլեկտրոնային դեկանատը, դասերի էլեկտրոնային գրանցամատյանը, դիմումների, անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, փաստաթղթերի պատճենների առցանց ընդունման և այլ հարթակներ:

II. ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

5. Բարձրագույն մասնագիտական կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով Համալսարանը կազմակերպում է հեռավար, ինչպես նաև զուգակցված՝ առցանց-անցանց, ուսումնական գործընթաց՝ ՀՀ կառավարության, ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումների կամ ԳՊՀ ռեկտորի հրամանի հիման վրա, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հետևյալ դեպքերում՝

1) սույն կարգի 3-րդ կետում նախատեսված (հատուկ ռեժիմները՝ արտակարգ և ռազմական դրության պայմաններ, անհաղթահարելի ուժի՝ ֆորս-մաժորային իրավիճակներ և այլն) հիմքերով,

2) եթե ԳՊՀ-ն չունի համապատասխան մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով դասախոսի թափուր տեղի համալրումը,

3) օտարերկրյա պետություններում ուսանողի ժամանակավոր գտնվելու հիմքով՝ հարգելի պատճառով, եթե նրանց բարձրագույն կրթության իրավունքը չի իրացվում տվյալ երկրում,

4) այն ուսանողների համար, ովքեր սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից,

5) այն ուսանողների համար, ովքեր գտնվում են օտարերկրյա պետություններում և պետք է մասնակցեն ամփոփիչ ատեստավորման առկա-առցանց կամ հեռակա-հեռավար գործընթացին, սակայն հարգելի պատճառներով չեն կարողանում վերադառնալ Հայաստանի Հանրապետություն,

6) այլ հիմքերով:

6. Սույն կարգով նախատեսված դեպքերում և կարգով հեռավար կրթությունը կարող է կազմակերպվել ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով՝ առկա-առցանց ձևերով ու ընթացակարգերով:

7. Սույն կարգով նախատեսված դեպքերում և կարգով հեռավար կրթությունը կարող է կազմակերպվել ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում իրականացվող բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով՝ հեռակա-հեռավար ձևերով ու ընթացակարգերով:

8. Հեռավար կրթությամբ իրականացվող դասընթացի բովանդակությունը չի կարող տարբերվել առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացվող տվյալ առարկայի ծրագրով սահմանված բովանդակությունից:

9. Դասընթացների բացի, Համալսարանի կողմից սահմանված ընթացակարգերով կարող են հեռավար իրականացվել համապատասխան ուսումնական պլաններով նախատեսված քննաշրջանները, լուծարային շրջանները, պրակտիկաների արդյունքների ստուգման, հաշվետվությունների ընդունման և գնահատման, ամփոփիչ ատեստավորման և այլ գործընթացները:

10. Հեռավար կրթության մասնակիցներն են Համալսարանի ուսանողները, դասախոսները, ուսումնական խորհրդատուները, Համալսարանի կողմից գործընթացում ներգրավված մասնագետները:

11. Հեռավար կրթական ծառայություններ ստանալու և մատուցելու ընթացքում բոլոր ուսանողները, դասախոսները, ուսումնական խորհրդատուները և մասնագետներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ առկա (հեռակա) ուսուցման ընթացքում, այդ թվում՝ Համալսարանի ուսումնական և նյութատեխնիկական բազայից օգտվելու առումով, սահմանված կանոնների պահպանմամբ:

12. Հեռավար կրթության տեխնոլոգիաները կիրառվում են ուսումնական, լաբորատոր, գործնական պարապմունքների, ընթացիկ և միջանկյալ գնահատումների, ինչպես նաև սահմանված կարգով՝ ամփոփիչ ատեստավորման իրականացման ժամանակ՝ ըստ անհրաժեշտության չբաստեղով ուսանող-դասախոս անմիջական հաղորդակցությունը՝ սահմանված կանոնների պահպանմամբ:

13. Հեռավար կրթության՝ առկա-առցանց և հեռակա-հեռավար գործընթացներում ուսանողների և դասախոսների անմիջական համատեղ ուսումնական գործունեության՝ ուսումնական, լաբորատոր և գործնական պարապմունքների ծավալների հարաբերակցությունը որոշվում է Համալսարանի կողմից՝ ելնելով մասնագիտական կրթական ծրագրերի առանձնահատկություններից:

14. Համալսարանն իրավասու է սույն կարգին համապատասխան հեռավար կրթության տեխնոլոգիաներ կիրառելու նաև լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելիս՝ այդ տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների ու սովորողների համաձայնության, ինչպես նաև հեռավար լրացուցիչ կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ սարքավորումների առկայության դեպքում:

15. Հեռավար կրթությամբ հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելիս՝ Համալսարանը գործընթացում ներգրավված բոլոր ուսանողներին և այլ սովորողներին ապահովում է անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի (ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի, դասախոսությունների,

մասնագիտական գրականության, անհատական, կուրսային և այլ աշխատանքների թեմաների, հարցաշարերի, թեստերի և այլն) էլեկտրոնային տարբերակներով:

16. Հատուկ ռեժիմների՝ արտակարգ և ռազմական դրության պայմաններում, ինչպես նաև անհաղթահարելի ուժի՝ ֆորս-մաժորային իրավիճակներում Համալսարան հաճախելով՝ առկա և հեռակա կրթության անհնարինության դեպքում առկա-առցանց և հեռակա-հեռավար ուսուցման կազմակերպման դեպքերում Համալսարանն ըստ անհրաժեշտության կարող է ուսանողներին և դասախոսներին ժամանակավոր օգտագործման տրամադրել հեռավար ուսուցման համար անհրաժեշտ և ԳՊՀ-ում առկա տեխնիկական միջոցներ:

III. ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Համալսարանը հեռավար կրթությունը կազմակերպում է՝ ըստ ֆակուլտետների մասնագիտական բաժինների և կուրսերի, հնարավորինս պահպանելով ուսումնական գործընթացի հաստատված ժամանակացույցը:

18. Համալսարանը հեռավար՝ առկա-առցանց և հեռակա-հեռավար կրթությունը կազմակերպում է տվյալ մասնագիտության կրթական ծրագրին, ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց պահանջները կատարած ուսանողները գնահատվում են՝ Համալսարանի սահմանած կարգով:

19. Համալսարանի կողմից հեռավար կրթության միջոցով ուսուցումը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով հեռավար կրթության համար նախատեսված ժամաքանակների 70%-ը ուսանողների ոչ պակաս, քան 90%-ը յուրացնում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:

20. Հեռավար կրթության գործընթացից դուրս մնացած ուսանողների համար ուսումնական պլանով նախատեսված դասերի յուրացումը առանձին դեպքերում կատարվում է անհատական ժամանակացույցով՝ Համալսարանի կողմից սահմանված ընթացակարգով:

21. Հեռավար կրթության ընթացքում ուսանողների ընդունելությունը, ինչպես նաև փոխադրումը, տեղափոխումը, ազատումը, հեռացումը Համալսարանն իրականացնում է՝ հնարավորինս պահպանելով առկա ուսուցման համար սահմանված կարգերը:

22. Հեռավար կրթության ընթացքում դասախոսների և ուսումնական խորհրդատուների աշխատանքի վարձատրությունը, նրանց աշխատանքի ընդունումը, արձակուրդի տրամադրումը, ինչպես նաև աշխատանքային այլ հարաբերությունների կարգավորումը Համալսարանն իրականացնում է ՀՀ աշխատանքային օրենսգրքին, աշխատանքային պայմանագրերին, առկա և հեռակա ուսուցման համար ԳՊՀ սահմանած կարգերին համապատասխան:

23. Համալսարանը նպաստում է հեռավար ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի, դասախոսությունների և առաջադրանքների

ակադեմիական փաթեթների մշակմանը, որոնք ներբեռնվում են ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգ /www.Learn.gsu.am/ և Համալսարանի այլ առցանց հարթակներ՝ բոլոր ուսանողներին հասանելի դարձնելու նպատակով:

24. Հեռավար կրթությամբ ուսումնական գործընթացը կազմակերպելիս՝ Համալսարանի դասախոսները կարող են օգտագործել ինչպես ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը /www.Learn.gsu.am/, այնպես էլ օգտվել այլ ծրագրերից:

IV. ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

25. Կրթական գործընթացը հեռավար, ինչպես նաև զուգակցված ձևերով կազմակերպելիս՝ Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն ապահովում են սովորողների ուսուցման և ուսումնառության համար անհրաժեշտ պայմանները՝ սույն կարգի 5-րդ բաժնին համապատասխան:

26. Համալսարանի հեռավար և զուգակցված ուսուցման գործընթացներում ներգրավված դասախոսները պետք է ապահովեն հեռավար և զուգակցված կրթությամբ իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի դասընթացների էլեկտրոնային դասախոսությունների, այլ նյութերի առկայությունը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության մշակեն նոր ուսումնամեթոդական նյութեր՝ ուսումնական պլանին, դասընթացի առարկայական ծրագրին և թեմատիկ պլանին համապատասխան, համալրելով հեռավար և զուգակցված կրթության ուսումնամեթոդական հիմքերը:

27. Հեռավար և զուգակցված կրթությամբ ուսումնական գործընթացի ապահովման համար, ի լրումն առկա ուսուցման ընթացքում առաջարկվող նյութերի, կիրառվում են նաև.

- 1) հատուկ մասնագիտացված դասագրքեր՝ մուլտիմեդիայի ուղեկցությամբ,
- 2) էլեկտրոնային ուսումնամեթոդական նյութեր,
- 3) էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ,
- 4) վերապատրաստման էլեկտրոնային ձեռնարկներ,
- 5) համակարգչային վիրտուալ լաբորատորիաներ,
- 6) ստուգող-թեստավորող համալիրներ,
- 7) ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ,
- 8) ձայնագրություններ,
- 9) հեռուստահաղորդակցության կապի միջոցներով տրամադրվող նյութեր,
- 10) ուսումնական առցանց շտեմարաններ, այլ էլեկտրոնային նյութեր:

28. Հեռավար և զուգակցված կրթական գործընթացում օգտագործվում են ուսումնական, մեթոդական (դիդակտիկ) այնպիսի նյութեր, որոնք կիրառման պահին իրենց բովանդակությամբ ու ծավալով համապատասխանում են որակի սահմանված չափանիշներին կամ իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի

պահանջներին, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության չափանիշներին:

**V.ԳՊՀ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝
ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՄ**

29. Հեռավար կրթական գործընթաց կազմակերպելիս՝ ԳՊՀ ռեկտորատը, դեկանատները, ամբիոնները, ակադեմիական քաղաքականության, որակի ապահովման, մարդկային ռեսուրսների կառավարման, արտաքին կապերի և լրատվության բաժինները, գրադարանները, արխիվը, հաշվապահությունը, մյուս կառուցվածքային ստորաբաժանումները շարունակում են իրենց գործառնությունների պատշաճ իրականացումը՝ հեռավար և զուգակցված ձևաչափերով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ելնելով ստեղծված պայմաններից և տվյալ իրավիճակին համապատասխանող պահանջներից, հիմք ընդունելով ԳՊՀ ռեկտորի հրամանները:

30. ԳՊՀ գիտական խորհուրդը, ռեկտորատը, ֆակուլտետների խորհուրդները, ամբիոնները, այլ կառուցվածքային ստորաբաժանումները կարող են գումարել առցանց նիստեր, խորհրդակցություններ, ժողովներ, ընդունել որոշումներ: Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր և օպերատիվ խորհրդակցություններ՝ ոչ աշխատանքային օրերին ու ժամերին:

31. Համալսարանի ռեկտորատը միջոցներ է ձեռնարկում հեռավար ուսուցման ծրագրերով, նոր կրթական-տեղեկատվական միջավայրում աշխատելու համար դասախոսներին, ուսումնական խորհրդատուներին, Համալսարանի ներգրաված այլ մասնագետներին վերապատրաստելու, գործընթացի համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու ուղղությամբ:

32. Հեռավար և զուգակցված կրթական գործընթաց կազմակերպելիս՝ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները

- 1) ապահովում է հեռավար և զուգակցված կրթական գործընթացի ծրագրային և տեխնիկական հիմքերը,
- 2) հետևում է Համալսարանի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի անխափան գործարկմանը,
- 3) սպասարկում է Համալսարանի հեռավար վարչարարության ու փաստաթղթաշրջանառության հարթակները,
- 4) տրամադրում է անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն, ծրագրային, մեթոդական և տեխնիկական աջակցություն, բազային տվյալների հղումներ, համացանցային կայքերի հասցեներ, տեղեկատվական համակարգեր, էլեկտրոնային բառարաններ, համապատասխան ցանցային ռեսուրսներ՝ ուսուցման գործընթացում օգտագործելու նպատակով,

5) իրականացնում է իրավիճակից բխող այլ գործառույթներ:

33. ԳՊՀ որակի ապահովման բաժինը պարբերաբար հարցումներ է իրականացնում ուսանողների և դասախոսների շրջանում, ամփոփում և վերլուծում է արդյունքները, ներկայացնում առաջարկություններ՝ հեռավար և զուգակցված կրթական գործընթացի որակի ներքին ապահովման և բարելավման նպատակով:

34. Համալսարանի դասախոսները, հեռավար և զուգակցված կրթության գործընթացին մասնակցելիս, իրականացնում են առկա (հեռակա) ուսուցման համակարգերում նախատեսված իրենց գործառույթները՝ նույն ծավալով, հեռավար և զուգակցված ձևաչափերով, կիրառում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման տարբեր ձևեր, էլեկտրոնային ծրագրեր, այդ թվում՝ ԳՊՀ ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման էլեկտրոնային համակարգը /www.Examination.gsu.am/

35. Հեռավար կրթության արդյունքներն ամփոփվում են առկա (հեռակա) կրթության համար սահմանված կարգով և արձանագրվում էլեկտրոնային ու թղթային տարբերակներով: